

մոզուած եմ որ «ինչ որ ալ եղած ըլլայ սկզբնական գրգապատճառը՝ Օձը կամ Վիշապը ամենախորունկ յարգանաց զիրք մը կը գրաւէր բնիկ Հայոց նախնական կրօնին մէջ, իբրեւ ներկայացուցիչն ու խորհրդանիշը հողային արդիւնաբերութեանց պարգեւարաշխ տիեզերական հոգւոյն կամ գերագոյն աստուածութեան»¹։ Եւ սակայն ինչպէս ըսի նախ՝ Արիական կրօնքն ու



Հայկական «Վիշապ» գորգ
ԺԷ դարէն առաջ
Ballard Collection - The Metropolitan
Museum of Art of New-York

ազդեցութիւնը, յետոյ ալ՝ Սեմական (վերջը Քրիստոնէութեան կերպարանքով) ազդեցութիւնը եկան 2500 տարիներու անդադրում ճիգով շրջել այդ ամէնը։ «Հին հեթանոսական կրօնքներուն մէջ ընկերային բարիք կը համարուէր վիշապներու սպանութիւնը, ըլլայ Հերակլէսով, ըլլայ Վահագնով»² կը գրէ Ե(ղիշէ) Ե(պիսկոպոս) Դ(ուրեան)։ Իրապէս կը յիշուի Վիշապաքաղ Վահագն, Հելլէներու Հերակլէսին համահաւասար, եւ սակայն սրբազանը պէտք է գիտնար որ երկուքն ալ

(Հերակլէս եւ Վահագն) Արիական աստուածութիւններ էին, ներմուծուած ի Հայս հաւանաբար Քրիստոսէ հինգ հարիւր տարիներ առաջ։ Եւ «Հայաստանի մէջ, Քրիստոսէ առաջ, երկու հազար տարիներէ ի վեր մինչեւ այսօր, մեր եկամուտ Արիական նախնեաց ազդեցութեամբ, եւ յետոյ ալ Քրիստոնէութեան միջոցաւ Սատանային, Փորձիչին, մարդկային կեանքը անէձքի ու դառնութեան ենթարկող Չար Ոգւոյն»³։ Առ այս կ'ուզեմ յիշեցնել Աղամ եւ Եւայի օձին սեմական աւանդութիւնը։ Թէեւ Օձին պաշտամունքը սեմական կրօնքին Մովսիսականութեան սկիզբն իսկ կը յիշուի, երբ Մովսէս անապատին մէջ օձազարդ խաչ մը կանգնեց, հրեայ օձահարները փրկելու, սակայն հոն չենք հանդիպիր Վիշապապաշտութեան կամ Վիշապին մասին յիշատակութեան կամ ակնարկութեան։ Ասիկա կը սահմանաւորէ Վիշապը օձէն։ «Վաչկատուն խաչնարած ժողովրդոց մէջ, կեանքի գերագոյն շահեկանութիւնը կը դառնար կոխի ու յափրշտակութեան շուրջ։ Եւ պատերազմի ու զօրաց Ոստուածն էր անոր պաշտպան գերագոյն առարկան։ Այսպիսի կրօններու մէջ շատ ստոր դիրք մը կը գրաւէին կին աստուածութիւնը, եւ Օձն ու Վիշապն ալ կը համարուէին իբր ներկայացուցիչներն ու խորհրդանիշները Չարին, Սատանային, Փորձիչին։ Այսպիսի չարահամբաւ էակ մըն էր Օձը՝ Սեմական ու Հնդկերոպական կամ Արիական ծագում ունեցող բոլոր կրօններու մէջ»⁴։

1. Տես նախորդ էջ, Կան. Թիւ 4.
2. Սիոն - Երուսաղէմ - Սուրբերն ու Անասունները, Ե. Ե. Դ. - 1928 էջ 152.
3. Լոյս, 1927, Թիւ 1 էջ 33.
4. Անդ։ Հոս անցողակի աւելցնել կ'ուզեմ որ հիւսիսային Ամերիկայի հնագոյն քաղաքակրթութեանց (հին հնդիկ = մալայեան) մեծապէս յառաջացած ու զարգացած մշակոյթին եւ կրօնքին մէջ թեւաւոր օձ մը կամ փետրաւոր օձ մը = Վիշապ մը կը պաշտուի իբր ջուրի, անձրեւի աստուածութիւն։ Հին հնութեանց անցորդներուն մէջ տաճարներ կան որոնց վրայ քանդակուած է վիշապաձեւ աստուածութիւն։ Իմ ճամբորդած ներքին նահանգներուն (Նիւ Մեքսիկոյ, Արիզոնա, Քոլորադոյ) մէջ հանդիպած իմ կարմրամորթ հնդիկ Հօրի կոչուած ցեղին որ կը պաշտէ օձ - սուրուն փետրաւոր թռչող՝ անձրեւի, ջուրի աստուածութիւն մը։